Անգլերեն լեզվի իմացության գնահատումներ Կալիֆորնիայի համար (ELPAC)

ELPAC-ը քննություն է, որը ստուգում է, թե որքան լավ են մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի աշակերտները հասկանում անգլերեն լեզուն, երբ այն իրենց մայրենի լեզուն չէ: ELPAC-ը փոխարինելու է Կալիֆորնիայի անգլերեն լեզվի զարգացման քննությանը (CELDT): ELPAC-ի շրջանակներում ստացված տեղեկությունները օգնում են ձեր երեխայի ուսուցչին աջակցել աշակերտին ճիշտ ոլորտում:

ELPAC-ը կազմված է երկու մասից՝

	Նախնական գնահատում	Ամփոփիչ գնահատում
Ով	Աշակերտները նախնական քննություն կունենան, եթե՝ ▪ Աշակերտի մայրենի լեզուն անգլերենը չէ ▪ Աշակերտը CELDT կամ ELPAC քննություններ չի ունեցել նախկինում և ▪ Աշակերտը նախկինում չի դասակարգվել՝ որպես անգլերեն լեզու սովորող	Ամփոփիչ գնահատումը անցկացնում են այն աշակերտների համար, որոնք համարվել են անգլերեն լեզու սովորող՝ ըստ նախնական գնահատման արդյունքների:
Ինչը	Նախնական գնահատման արդյունքում պետք է հայտնաբերվեն այն աշակերտները, ովքեր կամ աջակցության կարիք ունեցող անգլերեն լեզու սովորողներ են կամ վարժ տիրապետում են անգլերենին:	Ամփոփիչ գնահատումը ստուգում է անգլերեն լեզու սովորողների հմտությունները: Արդյունքները կօգնեն դպրոցին կամ կրթաշրջանին հասկանալու, թե արդյոք աշակերտը պատրաստ է վերադասակարգվել՝ որպես վարժ անգլերեն իմացող:
Երբ	Աշակերտները նախնական գնահատումն անցնում են՝ դպրոց ընդունվելուց 30 օրվա ընթացքում:	Անգլերեն լեզու սովորողներն ամփոփիչ գնահատում են ունենում յուրաքանչյուր գարուն՝ փետրվարից մայիս ընկած ամիսների ընթացքում, մինչև նրանք կվերադասակարգվեն որպես վարժ անգլերեն իմացողներ:
Ինչու	Կարևոր է գտնել և օգնել աշակերտներին, ովքեր անգլերեն լեզու սովորող են, որպեսզի այս աշակերտները լրացուցիչ աջակցություն ստանան՝ դպրոցում լավ սովորելու և ամբողջական դասավանդման նյութից օգտվելու համար: Յուրաքանչյուր աշակերտ, ով հանդիսանում է անգլերեն լեզու սովորող, ամեն տարի ELPAC-ի ամփոփիչ գնահատում է ունենում, որը ստուգում է անգլերեն լեզու սովորելիս նրա առաջընթացը:	

ELPAC-ը քննություններ է անցկացնում չորս տարբեր ոլորտներում՝

Սահմանափակումներ ունեցող աշակերտները հանձնու՞մ են ELPAC-ի քննություն

Այո, ELPAC-ն այնպես է նախագծված, որպեսզի աշակերտները՝ ներառյալ հատուկ կարիք ունեցողները, կարողանան մասնակցել քննությանը և ցույց տան, թե ինչ գիտեն և ինչ կարող են անել: Արդյունքում, քննությունն այնպիսի միջոցներ ունի, որ հնարավորություն է տալիս, որ տեսողական, լսողական և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող բոլոր աշակերտները դրսևորեն իրենց իմացածը և այն, ինչ կարող են անել:

Ինչպես կարող եմ օգնել երեխայիս՝ ELPACին պատրաստվելու համար

Դուք ձեր երեխայի կրթության կարևոր մասն եք կազմում: Ներքոհիշյալը կարող է օգնել ձեր երեխային՝

- Ամեն օր անգլերենով գրքեր կարդացեք ձեր երեխայի համար կամ թողեք նա կարդա ձեզ համար:
- Օգտագործելով նկարներ՝ խնդրեք, որպեսզի ձեր երեխան անգլերենով պատմի, թե ինչ է տեսնում և ինչ է կատարվում նկարի մեջ:
- Խոսեք ձեր երեխայի ուսուցչի հետ՝ հասկանալու համար, թե անգլերեն սովորելու որ ոլորտում (լսել, խոսել, ընթերցանություն, գրել) երեխան լրացուցիչ օգնության կարիք ունի:
- Քննարկեք քննությունը ձեր երեխայի հետ: Համոզվեք, որ երեխան գիտի և հասկանում է քննությունը հանձնելու կարևորությունը:

ELPAC-ը համապատասխանում է Կալիֆորնիայի անգլերեն լեզի զարգացման չափորոշիչներին: Դրանց մասին կարող եք տեղեկանալ՝ http://www.cde.ca.gov/sp/el/er/documents/eldstndspublication14.pdf հասցեով:

Հավելյալ տեղեկություններ

ELPAC-ի մասին հավելյալ տեղեկություններ կարող եք ստանալ, այցելելով՝ Կալիֆորնիայի կրթության բաժանմունքի ELPAC-ի կայքը՝ http://www.cde.ca.gov/ta/tg/ep/ հասցեով կամ ELPAC-ի կրթական քննական ծառայությունների կայքը՝ http://www.elpac.org/ :

Ձեր երեխայի ELPAC-ի քննության արդյունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ՝ կապվելով ձեր երեխայի ուսուցչի կամ դպրոցի գրասենյակի հետ: